ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

15 սեպտեմբերի 2017 թվականի **թիվ 65** քաղ. Մոսկվա

Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի ֆինանսական կայունությունն ու ֆինանսական կայունությունը բնութագրող եւ այդ ռեեստրում ընդգրկվելու համար անհրաժեշտ արժեքները որոշելու կարգը հաստատելու մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 14-րդ կետին, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 433-րդ հոդվածի 7-րդ կետին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 129^{11}-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝ Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի ֆինանսական կայունությունն ու ֆինանսական կայունությունը բնութագրող եւ այդ ռեեստրում ընդգրկվելու համար անհրաժեշտ արժեքները որոշելու կարգը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Ա. Մամին**	**Տ. Աբդիգուլով**	**Ի. Շուվալով**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի
2017 թվականի սեպտեմբերի 15-ի
թիվ 65 որոշմամբ

ԿԱՐԳ

Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի ֆինանսական կայունությունն ու ֆինանսական կայունությունը բնութագրող եւ այդ ռեեստրում ընդգրկվելու համար անհրաժեշտ արժեքների որոշման

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով որոշվում են՝

ա) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի ֆինանսական կայունության ցուցանիշները (այսուհետ համապատասխանաբար՝ ռեեստր, ֆինանսական կայունության ցուցանիշներ) եւ դրանց հաշվարկման կարգը,

բ) ֆինասնական կայունության ցուցանիշների չափորոշիչները եւ դրանց արժեքը,

գ) ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի ֆինանսական կայունության հանրագումարային ցուցանիշի (այսուհետ՝ հանրագումարային ցուցանիշ) հաշվարկման կարգը:

2. Ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձը ճանաչվում է ֆինանսապես կայուն, եթե հանրագումարային ցուցանիշի արժեքը, որը ֆինանսական կայունության ցուցանիշների գումարն է բալերով, կազմում է առնվազն 50 բալ:

3. Ֆինանսական կայունության ցուցանիշների արժեքները հաշվարկվում են ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան կազմվող եւ (կամ) ներկայացվող հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններում պարունակվող տեղեկությունների հիման վրա:

Ֆինանսական կայունության ցուցանիշների արժեքները կարող են հաստատվել աուդիտորական կազմակերպության կողմից (որպես անհատ ձեռնարկատեր գործունեություն իրականացնող աուդիտորի կողմից) դրանց հաշվարկման եւ այն տեղեկությունների հավաստիության մասով, որոնց հիման վրա դրանք հաշվարկվել են, եթե դա սահմանված է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

Ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի ֆինանսական կայունությունը կարող է որոշվել՝ հաշվի առնելով հետագա 3 տարիների հեռանկարում վարկային վարկանիշային գործակալությունների կանխատեսումը, եթե դա սահմանված է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

4. Ֆինանսական կայունության ցուցանիշների արժեքները հաշվարկվում են որպես ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի տարեկան հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների հիման վրա վերջին 3 հաշվետու տարիների համար հաշվարկված ֆինանսական կայունության ցուցանիշների արժեքների միջին թվաբանական:

5. Ֆինանսական կայունության ցուցանիշների եւ հանրագումարային ցուցանիշի արժեքները հաշվարկվում են սույն կարգի II բաժնին համապատասխան, իսկ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար՝ նաեւ հավելվածի համաձայն կատարված հաշվարկին համապատասխան:

Եթե ֆինանսական կայունության ցուցանիշների հաշվարկված արժեքները հավասար են կամ գերազանցում են սույն կարգի III բաժնում սահմանված՝ ֆինանսական կայունության ցուցանիշների չափորոշիչները, ապա այդ ցուցանիշների արժեքը բալերով ընդունվում է սույն կարգի III բաժնով սահմանված արժեքներին հավասար:

Եթե ֆինանսական կայունության ցուցանիշների հաշվարկված արժեքները սույն կարգի III բաժնում սահմանված՝ ֆինանսական կայունության ցուցանիշների չափորոշիչներից ցածր են, ապա այդ ցուցանիշների արժեքը բալերով ընդունվում է զրոյին հավասար:

II. Ֆինանսական կայունության ցուցանիշները եւ դրանց հաշվարկման կարգը

1. Ֆինանսական կայունության բացարձակ ցուցանիշները

6. Զուտ ակտիվների չափը ($Գ_{զա}$) ցույց է տալիս իրավաբանական անձի գույքի՝ տարեկան կտրվածքով որոշվող իրական արժեքը՝ պարտավորությունները հանած, եւ հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{զա} = Ա - (ԵՊ + ԿՊ),$$

որտեղ՝

Ա-ն՝ իրավաբանական անձի ակտիվների ամբողջությունն է՝ բացառությամբ հիմնադիրների դեբիտորական պարտքի.

ԵՊ-ն՝ իրավաբանական անձի երկարաժամկետ պարտավորություններն են.

ԿՊ-ն՝ իրավաբանական անձի կարճաժամկետ պարտավորություններն են:

7. Կանոնադրական կապիտալի չափը ($Գ_{կկ}$) ցույց է տալիս յուրաքանչյուր հաշվետու տարում իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթերում նշված՝ կանոնադրական կապիտալի չափը:

8. Հիմնական միջոցների մնացորդային արժեքը ($Գ_{մա}$) ցույց է տալիս իրավաբանական անձի հիմնական միջոցների արժեքը՝ դրանց մաշվածությունը հանած, եւ հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{մա} = Հիմնական միջոցներ – Մաշվածություն$$

2. Ֆինանսական կայունության հարաբերական ցուցանիշները

9. Ֆինանսական կայունության հարաբերական ցուցանիշների արժեքները կլորացվում են ստորակետից հետո մինչեւ 2 նիշի ճշտությամբ:

10. Ինքնավարության գործակիցը ($Գ_{ի}$) ցույց է տալիս իրավաբանական անձի անկախությունը վարկատուներից, սահմանվում է որպես սեփական կապիտալի եւ հաշվեկշռի (ընդհանուր) գումարի հարաբերակցություն եւ հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ի} = \frac{Սեփական կապիտալ}{Հաշվեկշռի (ընդհանուր) գումար}$$

11. Ընդհանուր (ընթացիկ) իրացվելիության գործակիցը ($Գ_{ընի}$) ցույց է տալիս իրավաբանական անձի՝ շրջանառու միջոցների հաշվին իր կարճաժամկետ պարտավորությունների կատարումն ապահովելու կարողությունը եւ հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ընի} = \frac{Շրջանառու ակտիվներ}{Կարճաժամկետ պարտավորություններ}$$

12. Սեփական կապիտալի շահութաբերությունը ($Գ_{սկշբ}$) ցույց է տալիս իրավաբանական անձի շահույթի եւ սեփական կապիտալի արժեքի հարաբերակցությունն ու հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{սկշբ} = \frac{\text{Զուտ շահույթ}}{\text{Սեփական կապիտալի միջին տարեկան արժեքը}} x100$$

13. Ֆինանսական կայունության գործակիցը ($Գ_{ֆկ}$) ցույց է տալիս իրավաբանական անձի ակտիվների այն մասը, որը ֆինանսավորվում է այն աղբյուրների հաշվին, որոնք իրավաբանական անձն իր գործունեության մեջ կարող է օգտագործել երկար ժամանակ, եւ հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ֆկ} = \frac{\text{Սեփական կապիտալ} + \text{Երկարաժամկետ պարտավորություններ}}{\text{Հաշվեկշռի (ընդհանուր) գումար}}$$

14. Սեփական շրջանառու ակտիվներով ընթացիկ գործունեությունը ապահովելու գործակիցը ($Գ_{ըգա}$) ցույց է տալիս իրավաբանական անձի սեփական շրջանառու միջոցների եւ նրա շրջանառու միջոցների մեծության հարաբերակցությունն ու հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ըգա} = \frac{\text{Սեփական շրջանառու միջոցներ}}{\text{Շրջանառու միջոցներ}}$$

15. Սեփական կապիտալի շարժունակության գործակիցը ($Գ_{սկշու}$) ցույց է տալիս իրավաբանական անձի կարողությունը պահպանելու սեփական կապիտալի մակարդակը եւ անհրաժեշտության դեպքում սեփական աղբյուրների հաշվին համալրելու սեփական շրջանառու միջոցներն ու հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գսկշու = \frac{\text{Սեփական շրջանառու միջոցներ}}{\text{Սեփական կապիտալ}}$$

III. Ֆինասնական կայունության ցուցանիշների չափորոշիչները եւ դրանց արժեքը՝

1. Ֆինասնական կայունության ցուցանիշների բացարձակ չափորոշիչները եւ դրանց արժեքը

16. Զուտ ակտիվների չափը ($Գ_{զա}$) պետք է լինի՝

Հայաստանի Հանրապետության համար՝ առնվազն 24 մլն հայկական դրամ.

Բելառուսի Հանրապետության համար՝ առնվազն 100 հազ. բելառուսական ռուբլի.

Ղազախստանի Հանրապետության համար՝ առնվազն 48 մլն տենգե.

Ղրղզստանի Հանրապետության համար՝ առնվազն 7.5 մլն սոմ.

Ռուսաստանի Դաշնության համար՝ առնվազն 9 մլն ռուսական ռուբլի:

Ցուցանիշի արժեքը 30 բալ է:

17. Կանոնադրական կապիտալի չափը ($Գ_{կկ}$) պետք է լինի՝

Հայաստանի Հանրապետության համար՝ առնվազն 17 մլն հայկական դրամ.

Բելառուսի Հանրապետության համար՝ առնվազն 75 հազ. բելառուսական ռուբլի.

Ղազախստանի Հանրապետության համար՝ առնվազն 32 մլն տենգե. Ղրղզստանի Հանրապետության համար՝

առնվազն 5.5 մլն սոմ.

Ռուսաստանի Դաշնության համար՝ առնվազն 6 մլն ռուսական ռուբլի:

Ցուցանիշի արժեքը 10 բալ է:

18. Հիմնական միջոցների մնացորդային արժեքը ($Գ_{մա}$) պետք է լինի՝

Հայաստանի Հանրապետության համար՝ առնվազն 17 մլն հայկական դրամ.

Բելառուսի Հանրապետության համար՝ առնվազն 75 հազ. բելառուսական ռուբլի.

Ղազախստանի Հանրապետության համար՝ առնվազն 32 մլն տենգե.

Ղրղզստանի Հանրապետության համար՝ առնվազն 5.5 մլն սոմ.

Ռուսաստանի Դաշնության համար՝ առնվազն 6 մլն ռուսական ռուբլի:

Ցուցանիշի արժեքը 10 բալ է:

2. Ֆինասնական կայունության ցուցանիշների հարաբերական չափորոշիչները եւ դրանց արժեքը

19. Ինքնավարության գործակիցը ($Գ_{ի}$) պետք է լինի առնվազն 0.30:

Ցուցանիշի արժեքը 10 բալ է:

20. Ընդհանուր (ընթացիկ) իրացվելիության գործակիցը ($Գ_{ընի}$) պետք է լինի առնվազն 1.00:

Ցուցանիշի արժեքը 10 բալ է:

21. Սեփական կապիտալի շահութաբերությունը ($Գ_{սկշբ}$) պետք է լինի առնվազն 5.00 տոկոս:

Ցուցանիշի արժեքը 5 բալ է:

22. Ֆինանսական կայունության գործակիցը ($Գ_{ֆկ}$) պետք է լինի առնվազն 0.60:

Ցուցանիշի արժեքը 15 բալ է:

23. Սեփական շրջանառու ակտիվներով ընթացիկ գործունեությունը ապահովելու գործակիցը ($Գ_{ընգա}$) պետք է լինի առնվազն 0.10:

Ցուցանիշի արժեքը 5 բալ է:

24. Սեփական կապիտալի շարժունակության գործակիցը ($Գ_{սկշու}$) պետք է լինի առնվազն 0.20:

Ցուցանիշի արժեքը 5 բալ է:

IV. Հանրագումարային ցուցանիշի հաշվարկման կարգը

25. Հանրագումարային ցուցանիշը ($ՀՑ_{կտօ}$) ցույց է տալիս ֆինանսական կայունության բոլոր ցուցանիշների գումարային ամփոփիչ արժեքը բալերով եւ հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$ՀՑ_{կտօ} = Գ_{զա} + Գ_{կկ} + Գ_{մա} + Գ_{ի} + Գ_{ընի} + Գ_{սկշբ} + Գ_{ֆկ} + Գ_{ընգա} + Գ_{սկշո}$$

ՀԱՎԵԼՎԱԾ

Լիազորված տնտեսական օպերատորների
ռեեստրում ընդգրկվելուն հավակնող
իրավաբանական անձի ֆինանսական
կայունությունն ու ֆինանսական կայունությունը
բնութագրող եւ այդ ռեեստրում ընդգրկելու համար
անհրաժեշտ արժեքները որոշելու կարգի

ՀԱՇՎԱՐԿ

լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի ֆինանսական կայունության ցուցանիշների եւ ֆինանսական կայունության հանրագումարային ցուցանիշի արժեքների

I. Բելառուսի Հանրապետության համար

1. Ֆինանսական կայունության բացարձակ ցուցանիշները

1. Զուտ ակտիվների չափը ($Գ_{զա}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$Գ_{զա}$ = տող 300 — (տող 590 + տող 690)

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

2. Կանոնադրական կապիտալի չափը ($Գ_{կկ}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{կկ} = տող\ 410$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

3. Հիմնական միջոցների մնացորդային արժեքը ($Գ_{մա}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{մա} = տող\ 110$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

2. Ֆինանսական կայունության հարաբերական ցուցանիշները

4. Ինքնավարության գործակիցը ($Գ_{ի}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գի = \frac{տող\ 490}{տող\ 700}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

5. Ընդհանուր (ընթացիկ) իրացվելիության ցուցանիշը ($Գ_{ընի}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ընի} = \frac{տող\ 290}{տող\ 690}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

6. Սեփական կապիտալի շահութաբերությունը ($Գ_{սկշբ}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{սկշբ} = \frac{\text{տող } 210*}{(\text{տող } 490(\text{հաշվ. տ.}) + \text{տող } 490(\text{նախ. տ.}))/2} \text{x}100$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

7. Ֆինանսական կայունության գործակիցը ($Գ_{ֆկ}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ֆկ} = \frac{\text{տող } 490 + \text{տող } 590}{\text{տող } 700}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

8. Սեփական շրջանառու ակտիվներով ընթացիկ գործունեությունը ապահովելու գործակիցը ($Գ_{ըգա}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ըգա} = \frac{\text{տող } 290 - \text{տող } 690}{\text{տող } 290}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

*Հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտի 2-րդ հավելվածի եւ Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 104 որոշմամբ հաստատված՝ «Անհատական հաշվապահական հաշվետվություն» հաշվետվության տողի ծածկագիրը:

9. Սեփական կապիտալի շարժունակության գործակիցը ($Գ_{սկշու}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{սկշու} = \frac{տող\ 290 - տող\ 690}{տող\ 490}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

10. Հանրագումարային ցուցանիշը ($ՀՑ_{կտо}$) (բալերով) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$ՀՑկ_{տо} = Գ_{զա} + Գ_{կկ} + Գ_{մա} + Գ_{ի} + Գ_{ընի} + Գ_{սկշբ} + Գ_{ֆկ} + Գ_{ընգա} + Գ_{սկշու}$$

Ցուցանիշի արժեքը բալերով									Հանրագումարային ցուցանիշ
$Գ_{զա}$	$Գ_{կկ}$	$Գ_{մա}$	$Գ_{ի}$	$Գ_{ընի}$	$Գ_{սկշբ}$	$Գ_{ֆկ}$	$Գ_{ընգա}$	$Գ_{սկշու}$	

Ծանոթագրություն: Հաշվարկում նշված են Հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտի 1-ին հավելվածի եւ Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 104 որոշմամբ հաստատված՝ «Անհատական հաշվապահական հաշվետվություն» հաշվետվության տողերի ծածկագրերը:

II. Ղազախստանի Հանրապետության համար

1. Ֆինանսական կայունության բացարձակ ցուցանիշները

1. Զուտ ակտիվների չափը ($Գ_{զա}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{զա} = տող\ 500$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

2. Կանոնադրական կապիտալի չափը ($Գ_{կկ}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{կկ} = տող\ 410$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

3. Հիմնական միջոցների մնացորդային արժեքը ($Գ_{մա}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{մա} = տող\ 118$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

2. Ֆինանսական կայունության հարաբերական ցուցանիշները

4. Ինքնավարության գործակիցը ($Գ_ի$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_ի = \frac{\text{տող } 500}{\text{տող } 300 + \text{տող } 301 + \text{տող } 400 + \text{տող } 500}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

5. Ընդհանուր (ընթացիկ) իրացվելիության ցուցանիշը ($Գ_{ընի}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ընի} = \frac{\text{տող } 100}{\text{տող } 300}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

6. Սեփական կապիտալի շահութաբերությունը ($Գ_{սկշբ}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{սկշբ} = \frac{\text{տող } 300*}{\left(\text{տող } 500(\text{հաշվ. տ.}) + \text{տող } 500(\text{նախ. տ.})\right)/2} \text{x}100$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

*Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ 143 հրամանով հաստատված՝ «Շահույթի եւ վնասի մասին հաշվետվություն» ձեւի տողի ծածկագիրը:

7. Ֆինանսական կայունության գործակիցը ($Գ_{ֆկ}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ֆկ} = \frac{\text{տող } 500 + \text{տող } 400}{\text{տող } 300 + \text{տող } 301 + \text{տող } 400 + \text{տող } 500}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

8. Սեփական շրջանառու ակտիվներով ընթացիկ գործունեությունն ապահովելու գործակիցը ($Գ_{ըգա}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ըգա} = \frac{\text{տող } 100 - \text{տող } 300}{\text{տող } 100}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

9. Սեփական կապիտալի շարժունակության գործակիցը ($Գ_{սկշու}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{սկշու} = \frac{\text{տող } 100 - \text{տող } 300}{\text{տող } 500}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

10. Հանրագումարային ցուցանիշը ($ՀՑ_{կտо}$) (բալերով) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$ՀՑ_{կտо} = Գ_{զա} + Գ_{կկ} + Գ_{մա} + Գ_{ի} + Գ_{ընի} + Գ_{սկշբ} + Գ_{ֆկ} + Գ_{ընգա} + Գ_{սկշու}$$

Ցուցանիշի արժեքը բալերով									Հանրագումարային ցուցանիշ
$Գ_{զա}$	$Գ_{կկ}$	$Գ_{մա}$	$Գ_{ի}$	$Գ_{ընի}$	$Գ_{սկշ}$	$Գ_{ֆկ}$	$Գ_{ընգա}$	$Գ_{սկշ}$	

Ծանոթագրություն: Հաշվարկում նշված են Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ 143 հրամանով հաստատված՝ «Հաշվապահական հաշվեկշիռ» ձեւի տողերի ծածկագրերը:

III. Ռուսաստանի Դաշնության համար

1. Ֆինանսական կայունության բացարձակ ցուցանիշները

1. Զուտ ակտիվների չափը ($Գ_{զա}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{զա} = \text{տող } 3600 \ ^{*}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

2. Կանոնադրական կապիտալի չափը ($Գ_{կկ}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{կկ} = \text{տող } 1310$$

*Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության 2010 թվականի հուլիսի 2-ի թիվ 66ն. հրամանով հաստատված՝ կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվության ձեւի տողի ծածկագիրը:

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

3. Հիմնական միջոցների մնացորդային արժեքը ($Գ_{մա}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{մա} = տող\ 1150$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

2. Ֆինանսական կայունության հարաբերական ցուցանիշները

4. Ինքնավարության գործակիցը ($Գ_{ի}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ի} = \frac{տող\ 1300}{տող\ 1700}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

5. Ընդհանուր (ընթացիկ) իրացվելիության ցուցանիշը ($Գ_{ընի}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ընի} = \frac{տող\ 1200}{տող\ 1500}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

6. Սեփական կապիտալի շահութաբերությունը ($Գ_{սկշբ}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{սկշբ} = \frac{\text{տող } 2400**}{(\text{տող } 1300(\text{հաշվ. տ.}) + \text{տող } 1300(\text{նախ. տ.}))/2} \text{x}100$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

7. Ֆինանսական կայունության գործակիցը ($Գ_{ֆկ}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ֆկ} = \frac{\text{տող } 1300 + \text{տող } 1400}{\text{տող } 1700}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

8. Սեփական շրջանառու ակտիվներով ընթացիկ գործունեությունը ապահովելու գործակիցը ($Գ_{ըգա}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$Գ_{ըգա} = \frac{\text{տող } 1200 - \text{տող } 1500}{\text{տող } 1300}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

9. Սեփական կապիտալի շարժունակության գործակիցը ($Գ_{սկշու}$) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

**Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության 2010 թվականի հուլիսի 2-ի թիվ 66ն հրամանով հաստատված՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ձեւի տողի ծածկագիրը:

$$Գ_{սկշու} = \frac{տող\ 1200 - տող\ 1500}{տող\ 1300}$$

Արժեքը 1-ին տարվա համար	Արժեքը 2-րդ տարվա համար	Արժեքը 3-րդ տարվա համար	Միջին արժեքը 3 տարվա համար	Արժեքը բալերով

10. Հանրագումարային ցուցանիշը ($ՀՑ_{կտо}$) (բալերով) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$ՀՑ_{կտо} = Գ_{զա} + Գ_{կկ} + Գ_{մա} + Գ_{ի} + Գ_{ընի} + Գ_{սկշբ} + Գ_{ֆկ} + Գ_{ընգա} + Գ_{սկշու}$$

Ցուցանիշի արժեքը բալերով									Հանրագումարային ցուցանիշ
$Գ_{զա}$	$Գ_{կկ}$	$Գ_{մա}$	$Գ_{ի}$	$Գ_{ընի}$	$Գ_{սկշբ}$	$Գ_{ֆկ}$	$Գ_{ընգա}$	$Գ_{սկշու}$	

Ծանոթագրություն: Հաշվարկում նշվում են Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության 2010 թվականի հուլիսի 2-ի թիվ 66ն հրամանով հաստատված՝ հաշվապահական հաշվեկշռի ձեւի տողերի ծածկագրերը: